# ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (13.09.2021թ.-16.12.2021թ.)

Ութերորդ գումարման Ազգային ժողովի երկրորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2021 թվականի սեպտեմբերի 13-ին և ավարտվել դեկտեմբերի 16-ին: Գումարվել է 5 հերթական, 2 արտահերթ նիստ՝ սեպտեմբերի 24-ին և դեկտեմբերի 16-ին:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովն ընդունել է 98 օրենք, որից՝

- 2-ը «մայր» օրենքներ են:
- 82՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,
- 14՝ օրենք-համաձայնագրեր:

Ազգային ժողովը ընդունել է «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 93-ի հեղինակը Կառավարությունն է, 6-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորները:

Ընդունված օրենքներից 6-ինը գլխադասային է համարվել Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 7-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի

հարցերի մշտական հանձնաժողովը, 5-ինը՝ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 26-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 15-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 38-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը: «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը քննարկվել է բոլոր մշտական հանձնաժողովներում:

**Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝**

- ընտրել է՝

- Կենտրոնական բանկի խորհրդի անդամ
- Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածու,
- Հաշվեքննիչ պալատի անդամ,

- նշանակել է՝

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մեկ անդամ,
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ,

- լսել է՝

- Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին հաղորդումը,

- Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության հարցապնդման պատասխանը:

- իրավունքի ուժով ստեղծել է երկու քննիչ հանձանժողով՝

- «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից հավաքագրված եւ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված միջոցների օգտագործումը ուսումնասիրող քննիչ հանձնաժողով,
- Դատարաններում գործերի՝ օրենքով սահմանված բաշխման կարգի խախտմամբ, ինչպես նաեւ Արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցմամբ արդար դատաքննությունը խոչնդոտող փաստերն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով: